



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




Ltn

✓ 561









ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՂ

ՀՈՌՎՄԷԱԴԱՒԱՆ ՀԱՅԵՐՈՒՆ

ԵՒ ԱՆՈՆՅ ՈՒՍՈՒՑՉԱՅՑ ԴԷՄ

ՎԵՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ



248

Ի ԿՈՍՏԱՆՆՒՆՈՒՊՈԼԻՍ

1852



THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS 309

LECTURE 11



THE UNIVERSITY OF CHICAGO

1873



For the purpose of the present  
to be held in the name of the  
company, the following is the  
list of the members of the  
company.



Եւ ծառայ որ գիտիցէ զկանս  
Տեառն իւրոյ՝ եւ ոչ պատրաս-  
տեսցէ ըստ կանաց նորա, արբցէ  
դան բազում: Ղուկ 42, ԺԲ, Կամար, 47:



9 28028-62


28 563

1561-607

# ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՂ

ՀՈՌՎՄԷԱԴԱԻԱՆ ՀԱՅԵՐՈՒՆ

ԵՒ ԱՆՈՆՅ ՈՒՍՈՒՑՉԱՅԸ ԴԷՄ



Եւ յս օրերս մեծ ցաւ զգացինք մենք եւ մեր ընդհանրութիւնը ըստ մասին երբ որ տեսանք այն գարշելի գրութիւնը, որ իւր ընթացքը չկրնալով ուղղակի շարունակել, աջին և ձախին խոտորեր է. աս մեկ զարմանալի բան մը չէ, մանաւանդ անոնց՝ որ բանիւ եւ գործով կը յայտնեն:

Ի՞նչ կուզէիք դուք մեզնէ, որ ձեր դատը վաստակելու համար ընդհանուր ազդին սիրտը վերաւորեցիք. սուտ էին անոնք որ ըսեր էին այս տարի մայիսի մէջ, թէ հայոց հետ հաղորդակցութիւն կրնեն՝ առանկ չէր մի, ինչու հիմայ ելեր կուրա-

նաք, մենք անոնց այն անօրէն դրուածքը տեսնելով ու լսելով երբեմն անանկ բաներու համար ըրած զրպարտութիւննին, ձեր հետ մեկ եղած ձեզ պաշտպանելու եւ կամ թէ յաղթող հանդիսանալու համար՝ մէկզմէկ կը քաջալերէինք եւ մէկզմէկու կը դիմէինք. ասոր փոխարէն անանկ մէկ բան մը ըրիք դուք ու հրատարակեցիք այս օրերս, որ այն պիղծ տետրակը մոռցանք մենք, “չի գայ յեփինը, չըմէլն՝ ի սոջինը” . ձեր յաղթութիւնը այս օրերս երեւցած ուրիշ մեկ պիղծ դրուածքով մը պիտի ունենայիք, ուրեմն ողբալի էք դուք . աղէկ չէր մի ըլլար որ ասանկ եպերելի դրութիւննիդ դուրս չըլլար ու բոլոր ազգին սիրտը չի խոցեր, մեղք ձեզի:

Դարձեալ կրօնք՝ ինչու՝ մտիւննիդ չի դար որ մեր ձեռքը վաւերական վկայութիւններ ալ ունիք, ի՞նչ կը կարծէք դուք՝ միայն ձեր գիտցածն է մի՞, հասպա ձեր ուխտէն Մէկուէն Տրամախօսութիւնը, Միւսի մը նալ Բացաբրութիւնն ուղղափառ դասանութեան հայաստանեայց եկեղեցւոյ, ասոնք ասանկ ըլլալէն ետքը ըսելիք ունիք մի . ինչու չի շեմք քանի մը ալ ստորագրութիւնները որ դեռ կենդանի են տէրվրտիքն ալ: Դա-



ւական չեն ասոնք , մէկ ահագին սուտ  
 տետրակ մը ալ այս օրերս հրատարակուե-  
 ցաւ , որպէս թէ 1820 ին մեծ հալածանք  
 մը եղեր է քանի մը ալ վարդապետ եկե-  
 րեն նէ երկիւղներնուն է եղեր դալերնին .  
 Պօղոս Պատրիարդի օր հալածանք եղած  
 չէ . իրաւ միաբանութիւն եղեր է սիրով՝  
 այն ալ հրաւիրմամբ՝ եւ ոչ խստութեամբ  
 բռնադատելով . այն ի՛նչ ահագին սուտ է  
 որ կրկին անգամ՝ այն եպերելի տետրա-  
 կին մէջը կը դնէ թէ ինքը առաջին յիշա-  
 տակողն է եղեր Պիոս եօթներորդ Պապը  
 Պատարագին մէջ . գոնէ՛ կես դար անցնէր ,  
 ան ատենի մարդիկ դեռ կենդանի են . եւ  
 յայտնի սուտ ըլլալը կը վկայեն , անանկ  
 սուտ , որ ուրիշ բացայայտող ածական մը  
 չը վերցընէր , միայն այն ապերախտ տետ-  
 րակին նոր հնարած ածականը աղեկ կը  
 յարմարի աս սուտին , Արշիամենասուտիս  
 սիմօթաթօս :

Մենք ալ այսուհետեւ ձեզի կըսեմք ,  
 ինչպէ՛ս պիտի համարձակիք Սուրբ լուսա-  
 ւորչայ ամենասիրելի եւ բարեպաշտ օրհ-  
 նեալ որդւոցը դէմքը տեսնելու . բայց եթէ  
 չեմք խաբուիր նէ գիտեմք որ ձեր կեղծ  
 ու պատիր բնաւորութեամբը կրկին ան-

գամ մեր սիրտերը առնելու համար շատ պիտի աշխատիք, սակայն 'ի զ՛նր:

Հիմայ մեր ընդհանրութենէն ձեզի ըստ վերիքն ալ այս է, շատ աղէկ ըրիք եւ շատ շնորհակալ եղանք, որ ձեր պատրուակեալ թշնամի ըլլալնիդ մեզի հասկըցուցիք, որ կզգուշանամք ձեզնէ, եւ իմացանք որ դուք այն անվնաս կենդանիներէն չէք. եւ ձեր վրայ եղած ոչխարներուն բոստերը կարծեմ թէ ինկան այսուհետեւ. շահերնիդ ինչ ըլլալը ասկից ետքը իմացէք. մեզնէ հիմայ ճանչցուեցաք դուք թէ ի՛նչ էք. ձեր ինչ ըլլալը մեզի իմացընելէն ետքը աղէկ իմացուցիք որ ձեզնէ խաբուած Հռովմնալ ինչ կարծիք ունի եղեր մեր վրայ, ի՛նչպէս եւ անխալէ:

Հիմայ մեր շնորհակալութեան բուն պատճառը սա է որ ձեր այս տարի այն պիղծ դրութիւննիդ հանելով աղէկ մը մեզ ձեզնէ հեռացուցիք. ալ այսուհետեւ վի՛հ մեծ է ընդ մեզ եւ ընդ յեւ, ինչպէս որ ժամանակաւ Ալգասիլի մէկն ալ ըսաւ. եւ անանկ մէկ վի՛հ մը՝ որ հազարաւոր ասպարէզ տարածութեամբ չկրնար չափուիլ: Այս տեղս ձեզի սա ալ կուզեմք իմացընել, անոր համար որ ձեր ըսածը անդրադարձութիւն մը ըլլալով ձեր վրայ առ-

նուք . այսինքն թէ «Ռեղոնները շատ անգամ  
 Ռեղը կը պատրաստեն իշամեղոններուն» . այդ  
 ով չգիտէր , ինչ կը կարծէք դուք , ժամա-  
 նակաւ իմաստունին մէկը ձեզի համար  
 Ռեղոնացի անականը տալովը ստոյգ դուք  
 Ռեղոնացի կարծեցիք ինքզինքնիդ , չէ ա-  
 նանկ , այն քաղաքաւար եւ քանքարաւոր  
 Աւգասէրը ձեզի այն պատիւը ընելովը  
 պատուաւոր չէք ըլլար դուք , այլ պատիւը  
 իւր տէրը կը ճանչնայ . հապա՛ս քաղաքական  
 կրթութէնէ յառաջ եկած մարդկութիւն  
 մը նէ , որ այն բառը ձեզի համար յատկա-  
 ցուց ըստ ժամանակին . այն բառը՝ լսելով  
 դուք ձեզի կամ ձեր վրայ չէք կրնար սեպ-  
 հականէր , գիտնալով որ ինչեր կան՝ որ  
 գերագոյն գիտուն եւ իմաստուն գիտցը-  
 ւէր են Եւրոպայի մէջ , բայց Արեւելքէն  
 անանկներ ելեր են որ Եւրոպայի այն ճանչ-  
 ցուած փիլիսոփայն գրիչին տակը առնելով  
 ձգմեր է եւ կամ կը ձգմէ , իւր մեղուա-  
 ջան իմաստութեամբն ու աշխատութիւն ,  
 որ իրաւ մեղուններու նման իւր ու մարդ-  
 կային ազգի համար պատրաստած մեղրերը  
 իշամեղուններուն ճաշակել կուտայ : Ասոր  
 պէս իմանալու ու գիտնալու է ամեն բան :  
 Աս եւ գիտնալ որ այսուհետեւ մեզնէ



ձեր գէմքը տեսնողը թշնամւոյ մը երես տեսած պիտի ըլլայ . Իսրայէլի չնեղանա՛յ յանդոսն գրոսած քննարկոս , յիւր ըրած Խաղախ վարոս-Լեան յարճար վերջաբանոս-Լեան մը է այս՝ ըստ մասին :

Պարձեալ ինչ կըսէք աղեկ չենք մի ըներ մեր ամեն աւուր սովորական աղօթքներնուս մէջ ողորմիս հանեմք այն լուսահոգի Աղգուանցի Բարերջանիկ Զաքարիայ Պատրիարքին , որ բոլորովին բաժնուելու համար աղջիկ տալ առնուլ եւ խնամութիւն ընելը արգիլէր է . հիմայ կիմանամք որ ինչ բարի բարի օրէր եկան մեր վրայ , եւ խաղաղութեան եւ անդորրութեան գեղեցիկ արշալոյսը՝ իր լուսափայլ վեհափառութիւնը խանգարող աղօտ եւ մթին ամպերը փարատելով ինչպէ՛ս պայծառ կը ծագէ : Հիմայ ձեզի այս վերջաբանութեան վերջին խօսքը ըսելու համար՝ խնդիր մը պիտի ընեմք եւ կը յուսամք որ բարեհաճութեամբ յանձնառու կը ըլլաք ընդունելու :

Ձեր ազգութեան հայ անունը ալ այսուհետեւ ձեր վրայէն վերուցէք , եւ դուք հայ եմք ըսելով կը պարծիք , գիտնաք որ հայ չէք . հայութեան ամենացանկալի անունը մի աղտոտէք . վասն զի հայերը վեհ

անձն են , հայերը խաղաղասէր ազատա-  
 միտ են , այլափառութիւն չեն ընդունիր .  
 օտար ազգաց մոլեկան որպիսութիւնները  
 չեն սեպհականէր իրենց . քանզի ազգային  
 կատարեալ սէրը չներէր օտար ազգաց հետ  
 խառնակիլ . ծիծաղելի բանը ան է որ ոմանք  
 խիստ կը պնդէն , եւ կամ թէ ազգին վրայ  
 առ երեւոյթս սէր կը ցրցընեն , չեմ գի-  
 տեր ինչ օրինակաւ , եթէ յայտնի օրինակ  
 մը խնդրուելու ըլլայ՝ ահա այս օրերս ծը-  
 նած յայտնի ատելութիւնը բաւական  
 հայելի մը եղած է ռամիկներուն անգամ .  
 ասոր ի՞նչ ըսելու է , տարակուսելի խնդիր :

Դարձեալ կսեմք՝ ձեր միաբանութիւնը  
 մեր Սուրբ եկեղեցիէն հերձուած օրէն՝  
 մինչեւ հազար ութ հարիւր քսան եւ ութ  
 թուականը ինչ չարիքներու պատճառ ըլ-  
 լալնիդ քաջ գիտէք . եւ արդեօք որչափ ա-  
 պագայ արկածներ եւ դառնաշունջ պատ-  
 բանաց հողմունք պիտի խռովէին մեր ան-  
 դորրաւէտ եւ խաղաղասէր գլուխը . հիմայ  
 փառք Աստուծոյ որ մեզնէ բոլորովին բաժ-  
 նուելով ազգերնիս հանդարտ խաղաղու-  
 թիւնը կը վայելէ . թէ որ չբաժնուելու  
 ըլլայիք քանի կորուստներ պիտի ունենայ-  
 ինք դեռ եւս : Ի՞նչ զարմանալի բան որ

բաժնուած օրերնուդ մինչեւ այս օրս ձեր մէջք եղած նոր նոր խռովութիւնները պակաս չեն . ինչ որ եղեր է ու կլայ եւ կամ թէ սխտի ըլլայ , մէկզմէկէ թող ըլլայ , մենք խաղաղութիւնը վայելեմք՝ դուք խռովութիւնը . օրը նոր՝ խռովութիւնը նոր : Օ արմանալի բան մը ալ աս է որ մեջերս նուդ ոմանք խակ են ու հասած կը կարծեն ինքզինքնին , ոմանք ալ սոխակ կը կերպարանին , եւ ազգաւու կռիւնց կարճակեն , խաբէութիւնը մինչեւ երբ կրնայ ծածկուիլ , եթէ գիմակ է անցուցածնիդ ալ բաւական է վար առէք :

Դարձեալ այս միջոցիս ինչու լռեմք այն 1815 ին եղած խռովութիւնը որ մեզի համար նպաստաւոր կարծուած գիրքը՝ երբոր գողցուեցաւ Փասխաս Պօղոս վարդապետին ձեռօքը , այն ժամանակն ալ ինչ ահագին խռովութիւններ էր որ ձերայնոց առւները կլար . որոնցմէ մէկը կը հարկադրիմք գծելու :

Խուլէ խաբուն մէկուն առւնը , անոնց գերդաստանէն ինչտանի մարդ իայնէ իլ Վիայէ . երկու քահանայ մէկզմէկու կը հանդիպին մէկը Քոլէճցի , եւ միւսը Մխիթարեան . այս երկուքը մէկ մէկու հետ այնքան սաս-



տիկ կը վիճաբանին՝ որ բանը երթալով կը  
գէշանայ , եւ ըրած վէճերնին գաւազա-  
նաշարժութեան կը փոխվի . այն տանը մէջ  
այնքան աղաղակ եւ շփոթ կլլայ , որ մտար  
եղած զինուորանոցի զինուորները կը հաս-  
նին , եւ կուզեն որ տունը կոխեն . ինչ որ  
էնէ լուրնին հարկ կլլայ ու վերջը մէկզմէ-  
կէ կը հեռանան , ողբալի տեսարան : Աս  
բաները մենք չէինք մի գիտէր , ալ ուրիշ  
ինչէր ալ գիտեմք , պետք է որ աւելի հարկ  
եղածը խօսիմք , թող մնայ մեր գիտցած-  
ները ուրիշ ժամանակի եթէ հարկը մեզ  
ստիպելու ըլլայ : Այս ան զի դուք հիմայ չէ  
որ երկպառակութեան չար սերմունքը կը  
սերմանէք ազգին մէջ , հասցա՛ Ռենիթոունե-  
րուն սկզբնաւորութեան օրէն մինչեւ այս  
օրս՝ ձեր երկպառակութեան չար սերմուն-  
քը կը սերմանուին ողջոյն ազգին՝ եւ բա-  
րեպաշտ գերդաստաններուն մէջ անգամ :

Այս ալ ըսելք , մենք հերձուած ու հե-  
րետիկոս կլլամք կոր , ինչէ՞ն , մեր ո՞ր դաւա-  
նութենէն . աս ըսելն իքեն միտքս բան մը  
եկաւ , ինչո՞ւ ձեզ հոգնեցնեմ :

Հայերը Մարդապաշտ չեն՝ անոր համար  
հերձուած ու հերետիկոս են :

Պատր չեն պաշտեր Աստուծոյ պէս՝ եւ

Պապին համար անսխալ է չեն ըսեր, ինչու որ Պապերուն մեծ մեծ սխալմունքները աղեկ են իմացեր ու սորվէր, անոր համար հերձուած ու հերէտիկոս են:

Արձանապաշտ չեն, ձուլեալ պատկերներ, բու չեն երկրպագութիւն ըներ՝ անոր համար հերձուած ու հերէտիկոս են:

Սեղրամոմէ պատկերները կուգէ ըսելով ոչ վրան կը նային՝ եւ ոչ անոր երկրպագութիւն կենն, ընողին ալ քրիստոնեայէ չեն ըսէր, անոր համար հերձուած ու հերէտիկոս են:

Այս տեղս միտքս պատմութիւն մը եկաւ պետք է որ ընեմ: Արուսաղէմ լատին կրօնաւորները Յիսուսի Տեառն մերոյ Սուրբ Ճննդեան տօնախմբութիւնը կատարած օրերնին երթալու ու տեսնալու աղեկ ծաղրելի տեսարան մը, որ շատ գահգահայի բան մի է. թափօր ելած ժամանակնին մեղրամոմէ շինուած մէկ երախայ մը կուտան մէկ նախապատիւ քահանայի մը ձեռք, քահանայն գիրկը առած երախայի պէս վընկվընկալով թափօր կը դառնայ, որպէս թէ մանուկն Յիսուս՝ քահանային գիրկը կուլայ կոր. հիմայ կը հարցընեմ ձեզի՝ ասանկ մէկ ծաղրելի բան մը ալ մեր

ազգը ունի մի , անանկ է նէ չունենանու  
համար հերձուած ու հերէտիկոս եմք :

Գնա՛ Սպանիայ որ աչօքդ տեսնաս վարձ-  
կով Խաչին վրայ կապուողը Յիսուսի Քրիս-  
տոսի Տեառն մերոյ չարչարանաց գիշերը .  
մենք ասանկ ծաղրելի բան չունենանու  
համար հերձուած ու հերէտիկոս եմք :

Հոս եկու ել Պէկողլու որ եկեղեցիներուն  
մէջ եղած Տիշիբլինան տեսնաս , աս նա-  
խապաշարմունքները չունենանու համար  
հերձուած ու հերէտիկոս եմք :

Հրաշից Սուրբ Աստուածածնի ըսուած  
գիրքը որ անօրինակ հրաշքներով լեցուեր  
են , Մայրապետներուն դի-րո-ւի-ն յարուից  
ըլլալու Լարգամո-ւի-ն ի . անհաւատալի  
բաներու հաւատք չընծայելնու համար  
հերձուած ու հերէտիկոս եմք :

Հապա Երանելեաց դասէն մէկուն սքան-  
չելի աղերսագիրը առ Ամենասուրբ Երրոր-  
դուԹիւնը , որ իրաւ զարմանալի բան : Եւ  
ասոր ալ պատմութիւնը պէտք էր որ ըլլար  
համառօտ մը , բայց ուրիշ ժամանակի պահ-  
ուելու համար հարկադրեցանք եթէ հար-  
կը պահանջելու ըլլայ . ուստի զանց ըրինք  
դուցէ նախապաշարեալ ժողովուրդեան մը  
գայթակղութիւն կըլլամք , որուն կարօտ



չեմք: Այլ ահա ասոնց պէս որ թատրօնա-  
կան բաներնուղ, ի՞նչ կուզէք մենք ալ  
ձեզի պէս կոյր նախապաշարմունքներով  
լեցուի՞նք մի, ո՞չ երբէք. անանկ է նէ ըստ  
քմայ ձերոց հերձուած ու հերէտիկոս մը  
եղերեմք:

Ասոնք որ ասանկ են ալ ի՞նչ ունիք մե-  
զի ըսելու, մեր նախնական արարողութիւն  
ները ձեռքէ չք ձրգելնիս յանցա՞նք մի  
կըլլան կոր. կամ մեր Սուրբ լուսաւորչայ  
դաւանութիւնը ձեռվընիս կատարեալ ու-  
նենալով հերձուած ու հերէտիկոս կլլամք  
կոր, շատ բան: Հիմայ ձեր ըրած յար-  
գանքը մեր նախնիքներուն սուտ ու կեղ-  
ծիք ըլլալը յայտնի բան մի է, ինչու որ  
եթէ մենք հերձուած ու հերէտիկոս եմք,  
հարկաւ պէտք է որ անոնք ալ հերձուած  
ու հերէտիկոս ըլլան. հիմայ մեր նախնեա-  
ցը առ երեսս յարգանք ընենիդ ան է որ  
մեր ազգը բոլորովն Մարդապաշտ ընէք,  
անկից ետքը շատ դիւրին է անոնց ալ հերձ  
ուած ու հերէտիկոս ըլլալը. բայց դիտնաք  
որ մենք ալ ձեզի պէս նախապաշարեալ  
ըլլալով խաչը ոտքին վրայ դնող մէկուն  
մենք Աստուածական պատիւ չենք խտար,  
վասն զի խաչը մեր վրկութեան յոյսն է.



անոր համար մեր Սրբազան Քահանայապետները գլխունուն վրայ են դրեր, եւ ոչ ոտքերնուն վրայ. Բողո-Բի-ն իրենք պալանացը, որովհետեւ այս վեճ անունը Տիտայն Հրո-տովճայո- Պապին սեպհան է, զորն որ իոխառնելով յեղևէ Տեր Սրբազան Եպիսկոպոսապետին ալ իրենճայեճա: Աս ալ ասանկ ըլլալէն ետքը պէտք է որ նախ՝ ինքզինքը ուղղէ, եւ իր գղերը Աստուածային ճանապարհը դարձնէ, եւ չըլլայ Եւրոպայի կերպ կերպ հերձուածներուն եւ աղանդներուն պատճառ. ինչպէս որ եղաւ Լեւոն տասներորդ Պապը վեշտասաներորդ դարուն, իրմէն Լուոէր մը՝ Զուինկլին մը՝ եւ Վարվին մը ճնանելով. եւ անկից առաջ ալ ինչէր՝ ի՞նչ սրբաքննութեան ատեաններ եւ հրախաղութիւններ եղեր են. սուրը մէկ ձեռքը՝ հուրը մէկ ձեռքը, երկինք ու երկիր կը սասանեցընէ եղեր. աս բաներուս չէ չափաի ըսէք ա՛, թէ որ ատանկ բան մը չէ եղած ըսելու ըլլաք նէ շատերուն անունները տրվելով պէտք է որ պատմութիւնին ալ ըլլան. մենք հիմակու հիմայ գիտաւորութիւն չունինք գայթակղութիւն տալու, աղէկ է որ իրենց նախապաշարմանը մէջ մնան, անոր համար որ Պապը անխաղ է:

Բսենք որ ճշմարտութեան վարդապետ է ձեր պաշտած մարդը, ինչո՞ւ համար Վեշտասաներորդ դարէ մինչեւ ցարդ լռիկ մնջիկ նստէր ու իր կեանքը կընայի . թէպէտ եւ շատ արիւններ ալ քալեցնել տալու պատճառ եղած է . ինչո՞ւ համար տիեզերական ժողով մը չի կրնաց գումարել բոլոր ազգաց հետ քրիստոնէական սէր ու միաբանութիւն մը ընելով, ինչու չընելը ինքը աղէկ գիտէ . որովհետեւ տիեզերական ժողով մը գումարվելու ըլլար, շատ ծանր պիտի նստէր իրեն . առանջ առանջ մեր փրկութեան յոյսը եւ մեր երկրպագելի խաչը անարգանքէ պիտի ազատէր, ինչու որ ոտքին վրայէն պիտի վերնար . անկից ետքը Միմօնականութեան աղբիւրները պիտի ցամքէին, ներօղութիւնը հալածուելով . նաեւ Մինտայները, Համբիչները, Օրհնուած ոսկորները, որ Սրբոց մասունք է ըվելով կը բաժնուին . մէկ Պատարագի համար գին կտրուած հինգնոցը, որ աղէկ ժողովուրդը խաբելու համար նիւթեր եղած են . նաեւ քաւարանին նիւթական հուրը, զարմանալի բան . ինչ կըսէք հիմայ մենք հերձուած ու հերէտիկոս եմք .

«—աղ, որ այս լուստութեալ Գարո—» մէջ

հերձուած եւ հերէսիոս անունները որո՞՞  
 ճիշտ պատշաճիւր շորովիւր . զարմանալին  
 այն է՝ որ Յոյները ասոնցմէ կը բանբաս-  
 ուին որպէս թէ սիւճնականութեան մո-  
 լութիւն ունին . խեղճ յունաց ազգ . դուք  
 ալ մէզի հետ մէկ տեղ դժոխքին ան-  
 շիջանելի հրոյն մատնուած էք :

Մեզի իրաւ պէտքը չէր հիմայ մեր վեր  
 ջարբանութեան դիտաւորութենէ հեռա-  
 նալ , բայց ՚ի հարկէ ստիպեալ հազարէն  
 բան մը յիշելու ստիպուած կարծեցի զին-  
 քրս . շատ աղէկ էր որ կսէինք մեզ ի՞նչ  
 փոյթ , թող որ իրենք տեսնան ու ամբը-  
 նան , ելէ ամբընալու ալ դէ՛՛՛ս ունին նէ .  
 հիմակու հիմայ մեզի հարկ ըլլալիքը սա է  
 որ կսեմք իրենց . ալ այսուհետեւ հայ ա-  
 նունը որ պատկառելի է ամենայն ազգաց  
 կստիպեմք որ իրենց վրայէն վերցընեն , եւ  
 իրենց խռովարար երկպառակիչ եւ որոմ-  
 նացան բնաւորութեանցը յարմար անուն  
 մը դնեն . չէնէ մենք կը դնեմք , դուցէ  
 իրենց ալ հաճելի չլլար . թէ որ բանը մեզի  
 մնալու ըլլայ իրենց անուն մը կրնամք դը-  
 նել . բայց այս տեղս դիտեմք որ պիտի  
 ըսեն , ինչպէ՞ս կրնայ ըլլար որ մենք ազ-  
 դութիւննիս բոլորովին կորսցընեմք . մենք



ալ կուտամք ատոր պատասխանը , թէ ե-  
րազ է , երեւակայութիւն է , կամ թէ  
ցնորք է ձեր հայութիւնը ձեր վրայ :

Ըհա աս ասանկ ըլլալէն ետքը՝ այսօրվընէ  
կսկսիմ ըսել ԵՐԹԱՔ ԲԱՐՈՎ

1852 հոկտեմբեր 11

ՅԵՏԻՆ՝ ՏԵՐՏԻՐՈՂՆԵՐԷՆ  
ՄԷԿԸ

---

1. Այս ասիական խանգարեալ աւեր բառը վէնէտիկի  
Պարսաւագրքին հեղինակը , որպէս թէ ծաղը ընելուն  
համար , մենք ալ այս տեղս նոյն բառը ստորագրու-  
թեանը գործածեցինք :





Որ ասիցէ ցեղեայր իւր յիմար ,  
պարտաւոր լիցի ատենի • եւ որ  
ասիցէ ցեղեայր իւր մորոս , պար-  
տաւոր լիցի ՚ի գեհեն հրոյն :  
Մատի գլխ. համար 22: Ի




278.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and appears to be a list or inventory of items, possibly related to a library or collection. The words are difficult to decipher due to the bleed-through and the angle of the page.











Spec 104



